ՀՏԴ 64 (479.243)

ՔԱՐԻՆ ՏԱԿԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ[1]

Միեր Հարությունյան
պ.գ.թ., դոցենտ
«Կաճառ» գիտական կենտրոն» ՀԿ
Արցախ

Անոտացիա

Քարին-տակի հերոսամարտը Արցախյան պատերազմի հայտնի գործողություններից է: Ադրբեջանական աղբյուրները ձգտում են վերհանել այդ փոքրիկ գյուղում Ադրբեջանի ԶՈՒ-ի առաջին կանոնավոր ստորաբաժանումների առաջին օպերացիայի ձախողման պատճառները՝ ըստ ամենայնի փորձելով մեղավորներ փնտրել և մտացածին պատճառաբանություններ գտնել սխալների ու անհաջողությունների համար: Սույն հոդվածով փորձել ենք քննական վերլուծության ենթարկել այդ տեսակետները և ցույց տալ ադրբեջանական պաշտոնյաների ու տարբեր հեղինակների կեղծարարությունները, հատկապես՝ Քարին-տակի ճակատամարտի ռազմագիտական վերաիմաստավորման ոլորտում:

Բանալի բառեր՝ *զինված ուժեր, պաշտոնական ԶՏՄ, պաշտպանության նախարար, ռեյդային օպերացիա, մարտական ոգի, աշխարհազոր:*

Քարին-տակի հերոսամարտը, դառնալով Արցախի կազմավորվող ինքնապաշտպանության ուժերի մարտական փառքի օրինակներից և հայ ազատամարտիկների մարտական ոգու, բարոյականային ու ֆիզիկական որակների դրսևորման խորհրդանիշներից մեկը, լայնորեն լուսաբանվել է ոչ միայն հայկական աղբյուրներում: Ինչպես հայտնի է, որպես Ադրբեջանի նորաստեղծ կանոնավոր բանակի առաջին ստորաբաժանումների առաջին օպերացիա Քարին-տակում ավարտվեց խայտառակ պարտությամբ: Փորձելով վերհանել դրա պատճառները՝ ադրբեջանական զանգվածային տեղեկատվության միջոցները (ԶՏՄ), նախկին ու ներկա պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ռազմական գործիչները, օպերացիայի շարքային մասնակիցները պարբերաբար քննարկում են 1992 թ. ձմեռային ռազմարշավի անհաջողությունները ձևականորեն (արտաքնապես) դասեր քաղելու, բայց իրականում փաստերն աղավաղելու և դեպքերը նենգափոխելու ճանապարհով

[1] Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ №18 AK-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում:

իրենց արդարացնելու, քաղաքական հակառակորդներին մեղադրելու, իր օջախը պաշտպանող հայ ազատամարտիկի բարոյահոգեբանական ու մարտական անվիճարկելի առավելությունն ապարդյուն ժխտելու, ինչպես նաև ադրբեջանցիների աճող սերնդին ռազմահայրենասիրական (իմա՝ հայատյացության, փոխվրեժի հասնելու) ոգով դաստիարակելու նպատակներով:

Քարին-տակի ճակատամարտի մասին ադրբեջանական աղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝ ռուսալեզու և ադրբեջաներեն: Ադրբեջանցիների ռուսերեն գրվածքներն ավելի շատ սահմանափակված են քաղաքական ու գաղափարախոսական կաղապարներով, ակնհայտ քարոզչական նպատակներ են հետապնդում, իսկ ադրբեջաներեն նյութերում երբեմն կարելի է հանդիպել ակամա բացահայտումների, այնժամանակվա քաղաքական ու ռազմական իշխանությունների հասցեին սուր քննադատությունների, պաշտոնական տեսակետներից տարբերվող կարծիքների: Մենք ուսումնասիրել ու համեմատել ենք ադրբեջանական այն բաց աղբյուրները, որոնք հասանելի են համացանցում: Որպես կանոն, ադրբեջանական փաստարկումները նույնատիպ են, միտումնավոր, հաճախ՝ մերկապարանոց: Բայցևայնպես, մենք փորձել ենք խմբավորել մեզ հանդիպած և ռազմագիտության համար շատ թե քիչ հետաքրքրություն ներկայացնող այն տեսակետները, որոնք կարող են ամբողջացնել մեր պատկերացումները Քարին-տակի հերոսամարտի մասին:

«Քարին-տակի» օպերացիայի փաստի առթիվ Ադրբեջանի ՊՆ Գլխավոր շտաբի սպաները՝ փոխգնդապետներ Ի. Աբդուլաևը և Շ. Շիկարովը, ստուգում են անցկացրել, որի արդյունքների հիման վրա արդեն 1992 թ. փետրվարի 4-ին նրանց ներկայացրած տեղեկանքում ու զեկուցագրում արձանագրվել է, որ «այդ օպերացիան համապատասխան կերպով չի նախապատրաստվել, օպերացիայի իրականացման պլան չկար, հակառակորդի կրակակետերը ժամանակին չեն հայտնաբերվել և ճնշվել, օպերացիայի հրետանային նախապատրաստում չի իրականացվել, տեխնիկան չի նախապատրաստվել օպերացիային, հակառակորդի և տեղանքի մանրազնին հետախուզություն չի իրականացվել, չի պարզվել, թե որտեղ են գտնվում հակառակորդի պահեստազորի մոտակա ուժերը, դրանց շարժման ուղիները, նրանց գործողությունների հավանական բնույթը, բացակայում էին ստորաբաժանումների կառավարումը և նրանց միջև կապը, տեղի բնակիչներից ընտրված ուղեցույցները տեղանքում վատ էին կողմնորոշվում ռազմական տեսանկյունից, որոշակի ուժեր և միջոցներ չեն հատկացվել պահեստազորին և այլն»[1, հմմտ.՝ նկ. 1]:

Քարին-տակի օպերացիան անձամբ գլխավորած Ադրբեջանի պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Թաջեդդին Մեհդիևը և նրա հանձնարարությամբ հարձակման պլանը նախապատրաստած նախկին պաշտպանության նախարարի օգնական, մայոր Նուրադդին Աբդուլլաևը հետագայում պնդում էին, որ Քարին-տակի օպերացիայի պլան կար և այն մշակվել էր

ամենայն մանրամասներով: Հեռուստավավերագրող Ասաֆ Գուլիևի «Շեհիդներ»[2] փաստավավերագրական ֆիլմաշարի «Քարին-տակի օպերացիան» ֆիլմում[3] հատկանշվում է, որ «Քարին-տակի օպերացիան Ադրբեջանի պաշտպանության նախարարության մանրակրկիտ կերպով մշակած առաջին հարձակողական օպերացիան էր: Ադրբեջանական հրամանատարությունը հույս ուներ հաղթական օպերացիայով մարտական մկրտություն տալ առաջին գումարտակին և բարձրացնել նորաստեղծ բանակի հեղինակությունն ու գրավչությունը»:

Կարծում ենք՝ ուշագրավ է նույն ֆիլմում 1-ին գումարտակի հրամանատար Ն.Աբդուլլաևի՝ հարձակողական օպերացիայի պլանը և մտահղացումը գծագրի վրա բացատրելը: Ըստ նրա նկարագրության ժամը 24.00-ին գումարտակը Շուշիից Զաստավ տեղամասով, Շուշի-Լաչին խճուղուց սկիզբ առնող հողային ճանապարհով հետիոտն կարգով իջել է Հին Նաբիլար գյուղը: Այստեղ խմբավորումը (ադրբ.՝ **բոլուք**, որ բաղկացած է լինում 80-225 զինվորից) անցավ մարտական խնդրի կատարմանը: Նախ առաջ շարժվեց 1-ին դասակը (ադրբ.՝ **թաղիմ**, որ բաղկացած է լինում 35-40 զինվորից, իսկ հատուկ առաջադրանքների ժամանակ՝ ավելի շատ), իրար հետևից 2-րդ, 3-րդ և 4-րդ դասակները կամ խմբերը պիտի գնային, որոնց հրամանատարներին համապատասխան խնդիրներն էին առաջադրվել: 5-րդ դասակը մնացել է Հին Նաբիլարում: Մասնավորապես, 1-ին դասակի խնդիրն էր Քիրս լեռան լանջերով դուրս գալ Սղնախ-Քարին-տակ հողային ճանապարհը և փակել այն: Ամեն մի դասակի 5-6 ժամ ժամանակ էր հատկացվել իր նախանշված բնագիծը զբաղեցնելու համար: 2-րդ դասակը խնդիր էր ստացել փակել Շոշ-Քարին-տակ ճանապարհը, իսկ 3-րդ և 4-րդ դասակները պետք է թիկունք կազմեին համապատասխանաբար 2-րդ և 1-ին դասակներին և Քարին-տակը գրոհելու համար դիրքեր զբաղեցնեին: 5-րդ դասակը Հին Նաբիլարից պետք է աջակցեր Քարին-տակի ուղղությամբ մյուս ստորաբաժանումների առաջխաղացմանը և պատրաստ վիճակում սպասեր ելման դիրքերում: Այս դասակներից բացի, Կատարոտի բարձունքում երկու խմբավորում էր դիրքավորվել, որի կազմում կային հատուկ խնդիրներ ստացած զինծառայողներ: Ազդանշանից հետո (երևի մյուս դասակների նախանշված բնագծերը զբաղեցնելուց հետո.- Մ. Հ.) 5-րդ դասակը ըստ որոշ տվյալների՝ 20-25 զինվոր, Քարին-տակի ուղղությամբ պետք է առաջանար Շուշիի **թաբորում**(կարող է բաղկացած լինել 300-1300 զինվորներից, այս պարագայում տեղեկություն կա, որ 350-ն էին) գտնվող 1 ՀԴՄՄ (ԲՐԴՄ)-ի աջակցությամբ, ֆերմաներին 200-300 մ մնացած առկա բոլոր զենքերից կրակ պիտի տեղար գյուղի վրա: Ճակատամարտի մասնակիցների վկայությամբ՝ նրանք այդպես էլ գործել են: 5-րդ դասակի հետ Քարին-տակի պաշտպանների մարտի մեջ մտնելն ազդանշան կծառայեր 3-րդ և 4-րդ դասակների

[2] Կրոն. տառապյալ, հավատի (իսլամի) համար զոհված, արդար գործի համար զոհված, ընկած, նաև անմեղ զոհ[2, էջ. 316] (մենք քիչ հետո կտեսնենք, որ մի ամբողջ գյուղ բնաջնջելու նպատակով գաղտագողի հարձակված տասնապատիկ գերակշռող գրոհայիններին այս բառերով բնութագրելը տեղին չէ):

համար, որոնք պետք է գյուղի ուղղությամբ բացազատվեին այնպես, որ 3-րդ դասակի ձախ թևը և 4-րդ դասակի աջ թևը դուրս գային գյուղ տանող կամրջի վրա, այսինքն՝ երկու դասակները միմյանց կրակային գոտի չմտնեին: Դրանից երեք-չորս օր առաջ (իրականում՝ 1988 թ. սեպտեմբերից սկսած գրեթե ամենօրյա ռեժիմով) Շուշիի ադրբեջանական կայազորի ստորաբաժանումները կրակային ներգործության միջոցով վեր էին հանել Քարին-տակի կրակակետերը: Այդուհանդերձ, ադրբեջանական դասակներին հրահանգված էր գյուղին 150-200 մ մնացած զգուշանալ, որովհետև կարող էր ուշադրությունից վրիպած լինեին չբացահայտված կրակակետեր, որոնց ակտիվությունը Կատարոտի և Շուշիի պարսպաժայռի երկայնքով դիրքավորված դիպուկահարները և գնդացրորդները ճնշելուց հետո, դասակները կշարունակեին առաջխաղացումը գյուղի ուղղությամբ: 3-րդ և 4-րդ դասակների կարճատև դադարի նպատակը նաև այն էր, որ 5-րդ դասակի կրակային հարձակման դադարումից հետո, ներխուժեին գյուղ, գրավեին այն, բնակչությանը ֆիզիկապես վերացնելուց հետո, շարժվեին դեպի Քարին-տակ-Շոշ հողային ճանապարհը և պաշտպանություն բռնեին:

Ինչպես ակնհայտ է՝ Քարին-տակ գյուղը բոլոր կողմերից շրջափակման (կամ օղակի) մեջ է առնվել, միայն բաց է թողնվել գետի սահանքը, որպեսզի բնակչությունը այնտեղով դուրս գար: Այդ թվացյալ միջանցքի նեղ հատվածում դարանակալած խումբը, ինչպես խոստովանել է 1-ին գումարտակի հրամանատար Ն. Աբդուլլաևը, պետք է գնդակահարեր փրկություն որոնողներին՝ այդտեղով փախչող զինված մարտիկների անվան տակ:

Կատարոտի խմբավորումը 5-րդ դասակի կրակային հարձակմանը պետք է նպաստեր վերևից և վառվող անվադողեր, ժայռաբեկորներ գլորելով, կրակահերթերով շեղեր գյուղացիների ուշադրությունը 3-րդ և 4-րդ դասակների հարձակման ուղղություններից:

Առաջին հայացքից թվում է, թե օպերացիայի պլանն անթերի է մշակված: Ադրբեջանական հրամանատարությունը հաշվի էր առել, որ գյուղում հարձակման են սպասում Նաբիլար-Զաստավ ճակատից, ուստի հանկարծակիություն ապահովելու համար հարձակողական խմբերը գիշերվա մթության մեջ ու քողարկազգեստներով աննկատ դուրս են եկել գյուղի թիկունքը, փակվել են Շոշ և Սղնախ գյուղերից օգնության եկողների ճանապարհները, գյուղի պաշտպանների ուշադրությունը շեղել են Շուշիի պարսպաժայռից վառվող անվադողեր և մեծ քարաբեկորներ գլորելով, ժայռաձերպերին սարքավորված գնդացրային ու դիպուկազարկային կրակակետերից նշանառու և ինտենսիվ կրակով: Բացի ուշադրություն գրավելուց, պարսպաժայռի վրա դիրքավորվածները նպատակ ունեին խոչընդոտել գյուղի տարածքում և շրջակայքում հայերի տեղաշարժերին: Այս պլանը մատնում է ադրբեջանական հրամանատարության հիմնական խնդիրը՝ գյուղը բնաջնջելու նպատակը, ինչը տեղավորվում էր Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովի՝ իր քաղաքական

ընդդիմախոսների «Ղարաբաղում պատերազմը տանուլ տալու» մեղադրանքները «տպավորիչ» հաղթանակով չեզոքացնելու ուղեգծի մեջ:

Ադրբեջանական հրամանատարության ամբողջ հաշվարկը կենդանի ուժի ու միջոցների, ինչպես նաև դիրքային անհամադրելի առավելության համապատկերում գյուղի պաշտպանների մեջ խուճապ առաջացնելու և փախուստի մատնելու վրա էր, այնինչ, նրանք մահապարտի պես անձնուրաց կերպով մարտնչեցին թշնամու գերակշռող ուժերի դեմ և ստիպեցին ճողոպրել մարտի դաշտից՝ թողնելով, ինչպես գյուղացիներն են վկայում, 136 դիակ: Հակառակորդի հրամանատարությունը չարաչար սխալվել էր, կարծելով, թե երկու դարանակալ դասակների ուժերով կկարողանա կասեցնել հարևան գյուղերից օգնության եկող կամավորների առաջխաղացումը: Գիշերվա քողի տակ դարանակալածների կրակահերթերից զոհվել են Սյոմա Հայրիյանը, Ռոմա Սիմոնյանը, Սյոմա Ապրեսյանը, Աշոտ (Արմեն) Իշխանյանը (Շոշ գյուղից), Նարվեն Ավետիսյանը (Սոնախ գյուղից), Գրիշա Միքայելյանը (Ներքին Սզնեք գյուղից), Ռաֆայել Արզումանյանը (Քռասնի գյուղից) և Արսեն Շումանյանը (Ստեփանակերտից)[4; 37]: Ի դեպ, ադրբեջանցիները ներկայումս գլուխ են գովում դարանից մի քանի տասնյակ հայերի սպանությամբ: Սակայն բավական էր հարևան գյուղերից անհապաղ օգնության հասնող տասնյակ կամավորների կրակային ներգործությունը, որպեսզի ադրբեջանցի «իգիթները» գլխապատառ ճողոպրեին իրենց դարաններից («պարկի» մեջ չհայտնվելու համար) և վազեին գյուղը՝ գրոհող յուրայիններին միանալու, սակայն թե՛ հայերի և թե՛ յուրայինների խաչաձև կրակի տակ հայտնվելով՝ հաջորդ գիշերները լափ դառնային գայլերի ու շնագայլերի համար: Հարևան գյուղերից ժամանակին ցուցաբերված օգնությունը, որն ըստ արժանվույն չի գնահատել անգամ հայ պատմագրությունը, արմատապես փոխեց մարտական գործողությունների ընթացքը և կանխորոշեց հակառակորդի ջախջախումը: Հիրավի, այս համապատկերում ակնհայտ է դառնում ադրբեջանական հրամանատարության մտահղացման արկածախնդրային բնույթը, որն արտահայտվում էր սեփական հնարավորությունների գերագնահատմամբ, հայկական ինքնապաշտպանության ուժերի ու կամավորականների մարտական ոգու և շարժառիթավորվածության մեծ առավելության անտեսմամբ, տեղանքի ու մարտական գործողությունների թատերաբեմի առանձնահատկությունների մակերեսային իմացությամբ և այլն:

Ադրբեջանական աղբյուրները, այդ թվում՝ Քարին-տակի օպերացիան անմիջապես պլանավորած, ղեկավարած ու իրականացրած գործիչները լռում են, թե ինչ տեղ էր հատկացված գյուղի ռազմավարական Խաչին-սըռ բարձունքին, թե որտեղից են գործել հատուկ նախանշանակման ստորաբաժանման 11 փորձառու[3],

[3] Հակառակ այն փաստի, որ ադրբեջանական պաշտոնյաներն այդ խմբի թիվը նվազեցնում են մինչև 11 հոգի, այդ ստորաբաժանման Քարին-տակում սպանված հրամանատար Ռիադ Ահմեդովի մասին ֆիլմում նշվում է, որ նրա ընտրազորը բաղկացած էր 18, հետո 28 փորձառու մարտիկներից[5]: 1992 թ.

աֆղանական պատերազմն անցած ու Արցախում մարտական փորձն ավելացրած գրոհայինները, որոնք այդ օրն իրենց վախճանը գտան Քարին-տակում:

Գումարտակի հրամանատար Ն. Աբդուլլաևի վկայությամբ օպերացիայից հետո պարզ դարձավ, որ Շուշիի գումարտակից տրամադրված ուղեցույցների պնդմամբ դասակներն ավելի երկար երթուղով են գնացել, դասակների հրամանատարներին համոզելով, որ նախանշված ուղին դժվար է [մինչդեռ այլ աղբյուրներից մեզ հայտնի է, որ պարզապես նախանշված երթուղին ավելի վտանգավոր է համարվել.-Մ.Հ.], ավելի ապահով ճանապարհով դասակները տարվել են Նոր Նաբիլար, խոր շրջանցում կատարել և 5-7 անգամ ավելի երակար ճանապարհ հաղթահարելով՝ զբաղեցրել նախանշված բնագծերը: Ձմռան պայմաններում, խոր ձյան և մթության մեջ երթուղին 10-15 կմ երկարացնելը գումարտակի հրամանատարը լուրջ սխալ է համարել և այդ պատճառով ուշացումով տեղ հասնելն է հատկանշել, ինչը հանգեցրել է հրամանատարության առաջադրած խնդրի կատարման արդյունավետության նվազեցմանը: Նա մեղադրել է ուղեցույցներին՝ ինքնագլուխ երթուղին փոխելու համար: Գումարտակի հրամանատարն ամենավտանգավոր տեղամասերը համարել է 3-րդ և 2-րդ դասակներինը, որոնք գործել են հարվածի գլխավոր ուղղությունում, ուստի և, դրանց վրա էր հրամանատարության հիմնական ուշադրությունը, քանի որ 1-ին և 4-րդ դասակները, հարկ եղած դեպքում, կարող էին դուրս գալ մարտական գործողությունների թատերաբեմից, իսկ 3-րդ և 2-րդ դասակները, անհաջողության դեպքում, հայտնվելու էին Սղնախից, Շոշից և Քարին-տակից գործող ջոկատների արանքում: Սակայն, իրականում, ըստ գումարտակի հրամանատարի տեղեկությունների, մարտի ժամանակ 3-րդ և 2-րդ դասակները 5-6-ական սպանված ու այդքան էլ վիրավորներ տալով՝ դուրս են եկել մարտադաշտից, իսկ ահա 1-ին և 4-րդ դասակներից ողջ են մնացել 5-6-ական մարտիկներ, իսկ մնացածը կամ զոհվել են կամ էլ անհայտ կորել (հարկ է նշել, որ Քարին-տակում ադրբեջանական բանակի թողած 136 դիակներն առայսօր Ադրբեջանում համառորեն համարում են անհայտ կորածներ.-Մ.Հ.): Իսկ 3-րդ դասակը իբր մտել է գյուղը, փախուստի մատնել բնակիչներին, լռեցրել կրակակետերը, սակայն 4-րդ դասակից օգնություն չստանալով՝ ստիպված դուրս է եկել Քարին-տակ-Շոշ ճանապարհի վրա հսկող խմբի մոտ, այնտեղից էլ վերադարձել Շուշի: Գումարտակի հրամանատարը գտնում է, որ հարձակման պլանը շատ գրագետ է կազմակերպվել, և եթե հարձակումն ընթանար պլանավորածի պես, սպասվող արդյունքները հեշտությամբ կունենային: Սակայն 1-ին և 4-րդ դասակների և անհայտ խմբերի միջև սկիզբ առած անսպասելի փոխհրաձգությունն է եղել պատճառը, որ խանգարել է առաջադրված խնդիրների կատարմանը[5]:

հունվարի սկզբին Ռ. Ահմեդովը նշանակվել էր Ադրբեջանի ՊՆ հետախուզության վարչության պետի տեղակալ և հարձակման նախօրեին հետախուզել էր Քարին-տակի մատույցները[8]:

Ուշագավ է այն, որ անգամ տարիներ անց ադրբեջանցի հրամանատարի մոտ պահպանվել են «հեշտությամբ» հաջողության հասնելու պատրանքները, որոնք, մեր կարծիքով, 1992 թ. ձմռանը դարձան հակառակորդի պարտության պատճառներից մեկը:

Օպերացիայի պլանի գրագետ կազմակերպման մասին ինքնագովությունը չի դիմանում որևէ քննադատության, մանավանդ հիմա, երբ մենք հնարավորություն ունենք համադրելու հայկական ու ադրբեջանական աղբյուրների հիմնական տեղեկությունները և փաստարկները: Ադրբեջանական հրամանատարությունը հաշվի չի առել կամ անտեսել է այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են բարոյահոգեբանական ու մարտական որակների, երկու կողմերի զինվորների շարժառիթավորվածության, տեղանքի առանձնահատկությունների խելամտորեն օգտագործման հնարավորությունների ակներև տարբերությունները, որոնք ամենևին էլ նրանց օգտին չէին: Հակառակորդը, ինչպես ցույց տվեց մարտադաշտը, նշված որակները ստորադասել էր ուժերի ու միջոցների, դիրքային առավելություններին և այլ գործոններին, որոնք տեսականորեն չէին հակասում դասական ռազմարվեստին, բայց պատերազմական գործողությունների Արցախի թատերաբեմում ակնկալվող արդյունքը չտվեցին:

Այս կարևոր առանձնահատկությունն անտեսում են նաև ադրբեջանական ռուսալեզու աղբյուրները, իրենց պարտությունը պատճառաբանելով դավաճանությամբ[7]: Հակադարձելով այդ տարածված մտայնությանը՝ Շուշի քաղաքի նախկին բնակիչ Քյարիմ Հյուսեինովը փաստել է, որ «Շուշիից հատկացված ուղեկցողների 90 տոկոսի դիակները մնացին Քարին-տակում»[5]:

Քննության առնելով տարբեր տեղեկություններն ու վկայությունները՝ մենք կարծիք ենք հայտնել, որ հակառակորդի հատուկ նախանշանակման ստորաբաժանումը Շուշիից Քառասուն աստիճաններով իջել և հայտնվել է Քարին-տակի մատույցներում՝ գյուղում խուճապ առաջացնելու նպատակով հատուկ գործողություններ իրականացնելու առաջադրանքով [4; 35]: Սակայն դեռ չենք հանդիպել գյուղի պաշտպաններից այնպիսիններին, որոնք վկայեին այդ մասին կամ հաստատեին մեր ենթադրությունը: Ադրբեջանական աղբյուրները ևս լռում են այդ ստորաբաժանման երթուղու մասին: Այդուհանդերձ, մեր ենթադրությունն անհիմն չէ: Ադրբեջանական աղբյուրներում վկայություն կա նշված ուղղությամբ իրենց առաջխաղացման մասին: 1-ին գումարտակի զինվոր Սարխան Մեհթիևի վկայությամբ՝ «Կատարոտից մի խմբավորում աջակցում էր Զաստավից Քարին-տակի վրա հարձակված խմբավորմանը: Հետո մեզ հրամայվեց 40 աստիճաններով իջնել Քարին-տակի ուղղությամբ, որովհետև իրավիճակն այնտեղ օրհասական էր. արդեն առավոտյան ժամը 5-ի կողմերն էին, պետք է օգնության հասնեինք, և մեր 8-10 զինվորների շրջապատման մեջ ընկնելը խափանեցինք, և նրանց մարտադաշտից դուրս բերեցինք: Սակայն արդեն ակնհայտ էր, որ ձախողվել էինք, և յուրաքանչյուրը պետք է հետ քաշվեր. սա ժամը 6-ի կողմերը»[5]:

Բավական հակասական են նաև հակառակորդների՝ ճակատամարտին մասնակցած ուժերի ու միջոցների հարաբերակցության մասին տեղեկությունները: Դրանք համադրելու և քննաբար վերլուծելու արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ հստակություն մտցնելուն մեծապես կարող է օգնել օպերացիայի մեկնարկային ու ընթացքում մարտի մեջ մտցված ուժերի ու միջոցների տարբերակումը: Դա կարևոր է գյուղը բնաջնջելու ադրբեջանական հրամանատարության նկրտումները բացահայտելու, հակառակորդի կորուստների իրական պատկերը հստակեցնելու և Քարին-տակին ժամանակին հասցված օգնության նշանակությունը գնահատելու առումներով:

Քարին-տակի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի տեղակալ Արթուր Առաքելյանի տվյալներով՝ «1992 թ. հունվարի սկզբին ջոկատը ստացավ զենքի և զինամթերքի նոր խմբաքանակ՝ 14 միավոր ԱԿՄ մակնիշի ինքնաձիգ, 1 միավոր ՍՎԴ մակնիշի դիպուկազարկ հրացան, 1 միավոր ՊԿ մակնիշի ձեռքի գնդացիր, 1 ՌՊԳ-7 մակնիշի նռնականետ՝ մարտական երեք լիցքով: Հունվարի 18-ին Երևանից ժամանեցին 4 կամավորներ՝ իրենց հետ բերելով տարբեր տրամաչափի մոտ 7000 փամփուշտ: Ջոկատի կազմում ընդգրկված մարտիկների թիվը հասավ 45-ի»»[9; 116]: Այն ժամանակ Արցախի ինքնապաշտպանության գործը համակարգող գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը Քարին-տակի պաշտպանների թիվը նշել է մինչև 70, որից մոտ 20-ը գյուղի աշխարհազորայիններ, իսկ մնացածը Արցախի ԻՊԿ-ի տրամադրության տակ դրված ջոկատների մարտիկներ[10; 567]: Ըստ երևույթին, խոսքը հետմիջօրեին Քարին-տակը պաշտպանող տեղացիների ու հարևան գյուղերից օգնության հասած կամավորների շարքերը համալրելու ուղարկված մարտիկների մասին է: Գյուղի պաշտպանների թիվը 60-70 է նշվում ՀՀ ՊՆ հրատարակություններից մեկում[11; 11]:

Հակառակորդի ուժերի մասին Ա. Տեր-Թադևոսյանը նշել է, որ «գրոհին անմիջապես մասնակցում էին Ադրբեջանի ՊՆ կանոնավոր գումարտակի Շուշի տեղափոխված 180 զինվորներ, որոնց աջակցում էր 1 ԲՏՐ»[10; 567]: Քարին-տակի ճակատամարտին անդրադարձած հայ հեղինակների մոտ գյուղը գրոհած հակառակորդի քանակի մասին տեղեկությունները խառնափնթոր են: Կարծում ենք, որ շատ թե քիչ հստակություն կարելի է մտցնել ադրբեջանական աղբյուրների տեղեկությունների քննական վերլուծությամբ, թեև դրանք, ըստ ամենայնի, փորձում են նվազեցնել Քարին-տակի գրոհին ներգրավված ուժերի ու միջոցների քանակը: Այդ օպերացիան նախաձեռնած ու անձամբ ղեկավարած գեներալ-մայոր Թաջեդդին Մեհդիևը խոսում է 1 գումարտակի մասին և գումարտակի հրամանատարի խոսքերով կոնկրետացնում ներգրավված մարտիկների թիվը՝ 180 մարտիկ[6]: Այդ գումարտակից բացի նույն հաղորդման մեջ նա ակնարկում է նաև ճակատամարտին մասնակցած 7-8 հոգանոց խմբի (ըստ երևույթին՝ Ադրբեջանի ՊՆ հետախուզության վարչության պետի տեղակալ Ռ. Մամեդովի հատուկ նախանշանակման ջոկատի) և Շուշիի ՆԳ բաժնի ոստիկանական հատուկ նախանշանակման ջոկատի (Ֆարման

Խալիլովի հրամանատարությամբ) մասին, որի թվաքանակը, սակայն, չի նշվում: Ուշադրության է արժանի Ադրբեջանի ՊՆ նախկին ղեկավարի այն տեղեկությունը, որ «ցուցում էր տվել պատրաստել 200 քողարկազգեստ» ճակատամարտի մասնակիցների համար, որպեսզի «ձյան վրա անմիջապես չնկատվեին»: Ուրեմն, բացի Ֆ.Խալիլովի ոստիկանական ՀՆՋ-ի, որն, ըստ հիշյալ հեռուստահաղորդման մասնակիցների միահամուռ վկայությունների, սև գույնի համազգեստներով էր, առնվազն 200 գրոհային անմիջապես ներգրավված է եղել Քարին-տակի գրոհի մեկնարկին: Մեկ այլ տեղեկություն գալիս է փաստելու, որ, այնուամենայնիվ, ադրբեջանական բանակային և ոստիկանական ուժերի ավելի մեծ քանակակազմ էր ներգրավված գրոհին, քան խոստովանում են դրա կազմակերպիչներն ու անմիջական հրամանատարները: 1992 թ. Շուշիի գումարտակի հրամանատարի տեղակալ Մոհթասամ Մուհառամովը վկայում է, որ « երեկոյան ժամը 9 կամ 10-ին, Թաջեդդին Մեհդիևը գումարտակի հրամանատար Նուրադդին Աբդուլլաևի հետ եկավ մեր գումարտակը, նստեցինք, զրուցեցինք, և նա ասաց, որ ինձ 11 հոգի ուղեկցող պիտի տրամադրեք, հարցրինք, թե ինչի համար, նա ասաց, որ Քարին-տակի վրա հարձակման ենք նախապատրաստվում, ամեն մի խմբի համար 1 ուղեկցող է անհրաժեշտ[6]: Ուրեմն, հակառակ Թ. Մեհդիևի այն պնդման, որ Քարին-տակը գրոհելու համար 6 խումբ էր ստեղծվել, պարզվում է, որ գրոհին նախապատրաստվել կամ մասնակցել է 11 խումբ: Ինչպես խոստովանել է Թ. Մեհդիևը՝ «հաշվի առնելով տեղանքի կտրտվածությունը՝ որոշեցի օպերացիան անցկացնել խմբերի կազմով»[6]: Դա նշանակում էր, որ ադրբեջանական հրամանատարությունն ընտրել էր խմբերի ինքնուրույն խնդիրներ կատարելու մարտավարությունը: Հետևաբար, այդ խմբերը չէին կարող լինել դասակի կազմով, մանավանդ, որ դրանցից 4-ը հայտնվելու էր գյուղի պաշտպանների ու հարևան գյուղերից օգնության եկած կամավորականների արանքում: Եթե հավատանք Թ. Մեհդիևի խոսքերին, ապա ստեղծված 5 խմբերում Շիխովյան գումարտակի 180 զինվորներին հավասարապես բաժանելու պարագայում յուրաքանչյուր խմբում կստացվի 36 մարտիկ: Իսկ 6-րդ խումբը, որը ձևավորվել էր ադրբեջանական ՄՀՆՋ (ՕՄՕՆ)-ից, որը մարտական հերթապահություն էր տանում Նաբիլար (Ներքին Զարսլու) գյուղում և Կարմիր-քար ու Տիզկանց-քէրծ բարձունքներում, հավանաբար նույնքան մարտիկ ուներ: Ուրեմն, պարզ մաթեմատիկական հաշվարկով ճակատամարտի մեկնարկային փուլում ադրբեջանական գրոհայինների թիվն անցնում էր 200-ից.

Շիխովյան գումարտակ՝ 180 զինվոր

ՕՄՕՆ՝ 39[8]

Շուշիի ՆԳ բաժնի ՀՆՋ՝ մոտավորապես 10 միլիցիոներ

Ռիադ Ահմեդովի ՀՆՋ՝ 11 դեսանտային հետախույզ

Ուղեկցողներ՝ 7-11 հոգի

Ընդամենը՝ 250:

Այսպես կոչված «Բոզքուրդ» գումարտակի հրամանատարը տեղեկություն է տվել, որ իր մարտիկներն էլ են մասնակցել Քարին-տակի գրոհին[15], սակայն թվաքանակի մասին լռել է:

Գրոհին անմիջապես մասնակցողներից բացի, մեծ քանակությամբ օժանդակ ուժեր էին ներգրավված ԿՍ-19 թնդանոթից, ՀԴՄՄ զրահամեքենայից, ականանետներից, գնդացիրներից ու դիպուկազարկ հրացաններից կրակային ներգործություն ունենալու, Շուշիի պարսպաժայռից վառվող անվադողեր ու ժայռաբեկորներ գլորելու, հրամանատարական կետի անվտանգությունն ապահովելու և այլ խնդիրների կատարման համար:

Որպես պահեստազոր՝ նախատեսված էր Շուշիի գումարտակը՝ 350 մարտիկներով[6]:

1990-ականներին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության Ղարաբաղի բաժնի պատասխանատու աշխատակից Աղալար Ալիևի այն խոսքերից, թե Քարին-տակի գրավումը «ոչ թե գեներալ-մայորի զինվորական կոչումով պաշտպանության նախարարի, այլ մայորի հրամանատարությամբ առավելագույնը երկու գումարտակի ուժերով իրականացվելիք օպերացիա էր»[16], կարելի է դատել, որ, այնուամենայնիվ, փոքրիկ գյուղը գրոհել են երկու գումարտակից ավելի ուժեր:

Քարինտակցիների վկայությամբ մոտակա ադրբեջանական գյուղերից մեծ թվով զինված տղամարդիկ էին հավաքվել շրջակա բարձունքներին և սպասում էին գյուղի գրավմանը՝ այն ավերելու և կողոպտելու նպատակով: Իսկ ադրբեջանական աղբյուրները նշում են, որ անգամ Լաչինից (այժմ՝ Բերձոր) զինված մարդիկ ու օմոնականներ էին եկել և մասնակցում էին հարձակմանը[6]:

Այսպիսով, հակառակորդը Քարին-տակը գրավելու և բնակչությանը ցեղասպանության ենթարկելու համար կենտրոնացրել էր առնվազը 600 զինծառայող ու օմոնական (միլիցիոներ): Տարբեր տեղեկությունների համաձայն՝ հակառակորդը զինված էր ինքնաձիգներով, 2 գնդացիրներով (բացի պարսպաժայռից ու Կարմիր-քար ու Տիզկանց-քէրծ բարձունքներում տեղադրվածներից), այդ թվում՝ՌՊԳ-7 ձեռքի և ԱԳՍ-17 հաստոցավոր նռնականետերով [8], դիպուկազարկ հրացաններով, մի քանի օր ինտենսիվ մարտեր մղելու համար նախատեսված մեծաքանակ զինամթերքով, ԿՍ-19 զենիթային հրանոթով և 150 արկերի մարտական լիցքերով, ՀԴՄՄ զրահամեքենայով և այլ զինատեսակներով:

Գրեթե 12 ժամ տևած ճակատամարտի ընթացքում երկու կողմերն էլ պահեստազորի ուժեր ու միջոցներ են ձգել դեպի Քարին-տակ: Մասնավորապես, հակառակորդը համալրում է ստացել մոտակա գյուղերի հենակետերից ու Լաչինից[12], ներգրավել է առնվազը մեկ զրահատեխնիկա, ականանետներ, խոշոր տրամաչափի գնդացիրներ և այլ զինատեսակներ: Շուշիի գումարտակի զինվորները, նրանց իսկ վկայությամբ, հախուռն թափվել են Քարին-տակ և ունեցած զենքի տեսակներից կրակել տների վրա, սակայն աննկուն դիմադրության հանդիպելով՝ ստիպված նահանջել են: Նահանջողներն իրենց հետ տարել են բազմաթիվ դիակներ,

բայց 26 դիակ թողել են գյուղում և դեպի Շուշիի պարսպաժայռը տանող կածանի երկայնքով[6]:

Ադրբեջանցի ռազմական գործիչներն ու հեղինակները, հավատարիմ մնալով փաստերն աղավաղելու իրենց գործելաոճին, Քարին-տակում հայերի կորուստները հասցնում են մի քանի տասնյակի, իսկ իրենց կորուստները նվազեցնում մի քանի անգամ: Ադրբեջանական պաշտոնական ու իշխանամետ կայքերը հայկական կողմի կորուստները համարում են 80-ի մոտ՝ հավելելով մի քանի միավոր տեխնիկա[13, 14]:

Հակառակորդի կենդանի ուժի կորուստները հայկական աղբյուրները նշում են 100-201 [4; 38-39]: Ադրբեջանական աղբյուրներն ընդունում են սպանվածների ու «անհայտ կորածների» 90-ից մինչև 123 թվերը [7]: Ադրբեջանական մամուլում տեղեկություն է սպրդել, որ «օպերացիային մասնակցածներից 40-50 հոգի է ողջ մնացել»[17]: Սակայն, եթե ուղղենք այդ աղբյուրի սխալը ճակատամարտի մասնակիցների մոտավորապես 150 թիվը մեր ունեցած տվյալներով, ապա հակառակորդի կորուստները կարող էին կազմել շուրջ 200 զինվոր ու սպա, այդ թվում՝ օմոնականներ, ուղեկցողներ և ապահովող անձնակազմի ներկայացուցիչներ: Ադրբեջանական աղբյուրների նախնական ուսումնասիրությունների արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ

Ստորաբաժանումը	Անդառնալի կորուստները	Սկզբնաղբյուրը	Ծանոթագրություն
Շիխովյան գումարտակ	73 զինվոր ու սպա	[5]	գրոհային 4 խմբերի քանակակազմը հաշվարկված է 36-ական մարտիկի չափով
Շուշիի գումարտակ	26 զինվոր ու սպա 10 զինվոր Կատարոտում (Ջրդրր-դուզում) 7 ուղեկցողներ	[6] [17] [6]	Ընդամենը՝ 43 զինծառայող
գնդապետ-լեյտենանտ Ռիադ Ահմեդովի ՀՆՋ	9 սպա	[17]	
Քարինտակցիները հաշվել, թաղել կամ փոխանակել են	ադրբեջանցիների 136 դիակ	[18, թ. 68]	Եթե 136-ին գումարենք մարտադաշտից հանվածների և հիվանդանոցներում

			մահացածների թիվը, որ պետք է համապատասխանի հաջորդ տողում բերված թվին՝ 72, ապա կստացվի հակառակորդի անդառնալի կորուստների ընդհանուր թիվը՝ 208
Քարին-տակում իրենց վախճանն են գտել	72 զինվոր	[19, էջ 2, հմմտ.՝նկ.2]	ազգանուն, անուն, հայրանուններով ցուցակ
Ավելի ուշ կայքերից մեկում սկսել է շրջանառվել	85 զինվոր	[20]	ազգանուն, անուն, հայրանուններով ցուցակ
Ընդամենը՝	**136-208**		

Հակառակորդի զոհերի թիվը 200-ի շրջանակներում հաստատելու համար մեր պրպտումների համար հիմք են հանդիսացել ներկայումս Շուշիի քաղաքապետ, ԱԱՄ Շուշիի տարածքային միավորման ղեկավար, ճակատամարտի մասնակից Արծվիկ Սարգսյանի այն հաղորդումը, որ Կուբաթլուի ազատագրումից հետո տեղի դպրոցում տեսել է Քարին-տակում զոհված ադրբեջանցի զինծառայողների հուշատախտակ, որի վրա հաշվել է 201 հոգի[21]: Ինչպես տեսանք վերևում, սա հավանական թիվ է, որն, ի տարբերություն պաշտոնական ու իշխանապետ աղբյուրների, չի թաքցվել սեփական բնակչությունից:

Այսպիսով, քննության առնելով Քարին-տակի օպերացիայի մասին ադրբեջանական աղբյուրների հաղորդած ռազմական տեղեկությունները և դրանք համադրելով հայկական աղբյուրների արժանահավատ տվյալների հետ՝ մենք փորձեցինք որոշակի հստակություն մտցնել ճակատամարտող կողմերի մտահղացումների, մարտավարական խնդիրների, ուժերի ու միջոցների հարաբերակցության, կորուստների, բարոյամարտական ու հոգեբանական որակների և այլ բաղադրիչների մասին, որոնք էական ազդեցություն են ունեցել մարտի ամբողջ ընթացքի ու արդյունքների վրա: Մեր խնդիրը դյուրին չի եղել այն առումով, որ ադրբեջանական աղբյուրները, որպես կանոն, դուրս չգալով պաշտոնական-գաղափարախոսական ու քարոզչական կաղապարներից՝ խեղաթյուրում կամ թաքցնում են իրական փաստերը, միտումնավոր մոլորության մեջ գցում ընթերցողներին և, հատկապես, դեպքերին անտեղյակ աճող սերնդի

ներկայացուցիչներին ու օտարերկրացիներին: Այդուհանդերձ, մեզ հաջողվել է համացանցում հասանելի աղբբեջանական և հայկական առկա աղբյուրների տեղեկությունների համադրմամբ որոշակի եզրակացություններ կատարել, որոնք, կարծում ենք, հնարավորություն կտան հետագա ուսումնասիրություններն ավելի ամբողջական ու համափարփակ հիմքի վրա շարունակել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. URL: http://www.milhistory.org/topic/72-dashaltinskaia operatciia/ (ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
2. Azərbaycanca-rusca lüğət. Dörd silddə. IV sild. Baki, ”Şərq-Qərb“, 2006:
3. URL: https://www.youtube.com/watch?v=S4Bbq74loGE&feature=emb_rel_err (ներբեռնումը՝ 18.01.2020 թ.):
4. Հարությունյան Մ. Ա., Հարությունյան Ա. Ա., Քարին-տակի հերոսական պաշտպանությունը(ռազմագիտական տեսանկյուն), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2020:
5. Asəf Quliyevin arxivindən: Riad Əhmədov - Həqiqətlər, müəmmalar, URL: https://lolpanic.ru/video/x2ykxwm/as%C6%8Ff-qul%C4%B0yev%C4%B0n-arx%C4%B0v%C4%B0nd%C6%8Fn:-r%C4%B0ad-%C6%8Fhm%C6%8Fdov---h%C9%99qiq%C9%99tl%C9%99r,-m%C3%BC%C9%99mmalar/(վերջին դիտումը՝ 28.01.2020 թ.):
6. Ən Yeni Tarix. Daşaltı Əməliyyatı (tam Veriliş) URL: https://sufak.ru/video_eUVhNW1vc2Q3NEY0/n_yeni_tarix_daalt_mliyyat_tam_verili (ներբեռնումը՝ 19.01.2020 թ.):
7. Велимамедов М., Поражение у Дашалты явилось следствием предательства, www.Vesti.az (26.01.12), Он же, Очерки по Карабахской войне, Б., 2019.
8. URL: http://military-az.com/forum/viewtopic.php?t=1685(ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
9. Առաքելյան Ա., Օր, որ մայրամուտ չի ունենա (հուշեր Քարին-տակի ճակատամարտի մասին), Արցախապատում: Գիրք 3, Քարին տակի հերոսամարտը, Ստեփանակերտ, «Սոնա», 2013:
10. Тер-Тадевосян А., Анализ боевых действий в Арцахе (в период с июля 1991 по июль 1992 гг.), “Вопросы стратегии и безопасности”, Составитель, редактор, автор предисловия и примечаний Армен Айвазян, Ереван, ”Лусакн“, 2006:
11. 1992-2012. Ազգային բանակ-20: Օրացույց 2012, Երևան, ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, 2011:
12. URL: http://www.anl.az/down/meqale/hafta_ichi/2014/yanvar/348906.htm (ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
13. URL: https://qafqazinfo.az/news/detail/dasalti-emeliyyatindan-21-il-otur-34294 (ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):

14. URL: https://vetennamine.az/az%C9%99rbaycan-silahli-quvv%C9%99l%C9%99rinin-ilk-pes%C9%99kar-%C9%99m%C9%99liyyati-dasalti-%C9%99m%C9%99liyyatindan-26-il-otur-video/(ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
15. URL: http://femida.az/az/news/17221/(ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
16. URL: https://news.day.az/azerinews/788483.html(ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
17. URL:https://old.525.az/view.php?lang=az&menu=8&id=24200&type=1#gsc.tab=0 (ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
18. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 1, գ. 19 (Քարին-տակը և Արցախյան շարժումը):
19. “Дашалты” фачиәсинин гурбанлары, “Гәләбә үчүн”, 31. III. 1992:
20. URL: http://vetenugrunda.az/garabagh/item/5446-dashalt-aemaeliyyat-ndan-27-il-kedzhdi(ներբեռնումը՝ 22.01.2020 թ.):
21. Ճեպազրույց Արծվիկ Սարգսյանի հետ, Քարին-տակ, 26.01. 2020 թ.: Հմմտ.՝ Արծվիկ Սարգսյանի ելույթը հուշահամալիրի մոտ տեղի ունեցած հանդիսավոր միջոցառմանը՝ նվիրված Քարին-տակի հերոսամարտի 28-ամյակին:

РЕЗЮМЕ
ВОЕННЫЕ АСПЕКТЫ ГЕРОИЧЕСКОЙ ОБОРОНЫ КАРИНТАКА ПО АЗЕРБАЙДЖАНСКИМ ИСТОЧНИКАМ

Мгер Арутюнян

Ключевые слова: вооруженные силы, официальные СМИ, министр обороны, рейдовая операция, боевой дух, ополчение

Первая операция первых подразделений вновь сформированной регулярной армии Азербайджана завершилась позорным поражением в Каринтаке. Пытаясь выяснить его причины, азербайджанские средства массовой информации (СМИ), бывшие и нынешние официальные лица, в том числе военные деятели, рядовые участники операции регулярно обсуждают неудачи зимней кампании 1992 года, чтобы формально (внешне) извлечь уроки из них. Но на самом деле, чтобы искажать факты и фальсифицировать события, обвиняя политических оппонентов, отрицая моральные и психологические преимущества армянского борца за свободу, защищающего свой дом, а также воспитать подрастающее поколение азербайджанцев в милитаристическом (то есть антиармянском, реваншистском) духе.

Изучая военную информацию, предоставленную азербайджанскими источниками о Каринтакской операции, и сравнивая ее с достоверными данными из армянских источников, мы попытались дать некоторые разъяснения относительно деталей замысла противоборствующих сторон, тактических вопросов, соотношения сил и средств, потерь, морального духа и других качеств, оказавшие значительное влияние на весь ход и на итоги сражения.

SUMMARY

MILITARY ASPECTS OF KARINTAK'S HEROIC DEFENSE ACCORDING TO AZERBAIJANIAN SOURCES

Mher Harutyunyan

Keywords: Armed forces, official mass media, defense minister, raid operation, fighting spirit, militia

The first operation of the first units of the newly formed Azerbaijani regular army ended in a shameful defeat in Karintak. Trying to find out its reasons, the Azerbaijani media (mass media), former and current officials, including military leaders, rank-and-file participants of the operation regularly discuss the failures of the 1992 winter campaign, in order to draw lessons from them formally (externally). But, actually to distort facts and falsify events, blaming political opponents, denying the moral and psychological advantages of the Armenian freedom fighter who defends his home, and also to educate the younger generation of Azerbaijanis in the spirit of militarism (i.e. anti-Armenian, revanchist).

Studying the military information provided by Azerbaijani sources about the Karintak operation and comparing it with reliable data from Armenian sources, we tried to give some explanations regarding the details of the plan of the opposing parties, tactical issues, the balance of forces and means, losses, morale and other qualities that had a significant impact on the whole course and the outcome of the battle.



С П Р А В К А

с недостатках в подготовке и проведении операции "Дашалты".

26 января 1992 года в 6 часов 20 минут под руководством Министра обороны Азербайджанской Республики и командира I-го отдельного десантно-штурмового батальона войсковой части 18110 начался ввод сил I батальона и группы специального назначения в деревню Дашалты с целью ее захвата, локализации и ликвидации армянских бандитских формирований.

Личный состав батальона и группа специального назначения действовали в составе 4-х подгрупп. Разведку деревни должна была произвести группа под руководством подполковника Ахмедова Основные силы должны были войти в Дашалты со стороны с.Кабиляр

Дополнительные силы должны были войти в деревню со сторон Топхана.

Силы, находящиеся на высоте "Тала Дереси" играли отвлекающую роль.

В назначенное время операция началась. Завязалось бой. Во время боя управление отсутствовало.

Бой длился до 20 часов 26 января 1992 г. В результате боя потери составляют:

16 раненных, 3 погибли, 59 пропавшие без вести.

Как стало известно, операция не была подготовлена состоит отступлением образом. Так как отсутствовал план проведения операции своевременно не были выявлены огневые точки противника, артиллерийская подготовка операции велась четырьмя выстрелами из 100 мм пушки, следовательно не были подавлены огневые точки армянских боевиков.

4 взвод 2-ой роты I отдельной десантно-штурмовой бригады в/ч 18110 под командованием старого лейтенанта АЛИЕВА Гидаят Мадат оглы был поднят на наступление под криком "Ура", хотя этот взвод должен был находится в засаде, для уничтожения отхлынных сил армянских боевиков.

Цup 1



2.

Техника не была подготовлена к операции. Практически она не принимала участие в бою.

Личный состав I роты I отдельной десантно-штурмовой бригады в/ч 18110 при подъезде к г.Шуша, на месте установки пушки был остановлен и брошен в бой.

Вышеперечисленные недостатки были порождены отсутствием боевых приказов, распоряжений. Кроме того, отсутствовали списки личного состава, выполняющего боевую задачу в составе отдельных групп.

Не велся учет личного состава, вооружения и военной техники. Не была оценена обстановка на основе разведданных, которые отсутствовали.

4.02.1992 г.

Подполковник АБДУЛЛАЕВ И.

С П Р А В К А

Докладываю, что в результате личного общения с очевидцами и участниками операции по захвату с.Дашалты установлено:

Тщательная разведка противника и местности не была проведена. Не выявлено, где находятся ближайшие резервы противника, пути их выдвижения, возможный характер их действий.

Силы и средства, участвовавшие в операции, не были полностью учтены.

Не произведен расчет соотношения сил и средств.

Не в достаточном количестве имелось орудий, бронетанковой техники. Техника и их вооружение к боевым действиям не было подготовлено.

Основы ведения наступления были нарушены. Личный состав вошел в атаку без огневой подготовки.

Разведки в ходе ведения боя не велась.

Отсутствовало управление между подразделениями.

Проводники, подобранные из местных жителей, слабо разбирались в местности с военной точки зрения. Определенные силы и средства не были выделены в резерва.

План проведения операции, боевые приказы и распоряжения не были оформлены документально.

4.02.1992 г.

Подполковник ШИКАРОВ Ш.

(Әвәлки 1-чи сәhифәдә)

...ашлары адындан башсағлығы веририк. Бу сијаһы там дәгиглә...дирилмәјиб. Гејд едәк ки, бу икидләримизин сон талеји һәләлик бизә мә'лум дејил. Бәлкә онлардан саг галанлар вар.

Гарабаг торпагларында **АЗАДЛЫҒЫМЫЗ** вә **ИСТИГЛАЛЫМЫЗ** угрунда шәһид олан гәһрәманларымыза **АЛЛАҺ** рәһмәт еләсин! Гој онларын руһу мәләкләрә говушсун!

Онларын сијаһысына тәгдим едирик:

1. Хәлилов Рәвшән Аллаһверди оғлу
2. Бајрамов Камил Чанбала оғлу
3. Таһиров Вагиф Сабир оғлу
4. Ибраһимов Чаваншир Зејнал оғлу
3. Әлијев Бәкир Иса оғлу
6. Вәличанов Сүлејман Мә'буд оғлу
7. Шамилов Сәрраф Бакир оғлу
8. Бајрамов Вагиф Пирәли оғлу
9. Худијев Фүзули Чәмил оғлу
10. Нәчәфов Рәвшән Һачы оғлу
11. Таһиров Әлөвсәт Камран оғлу
12. Чәбрајылов Һәмид Јашар оғлу
13. Маликов Амил Әлиһејдәр оғлу
14. Һүсејнов Күлверди Ағаверди оғлу
15. Намазов Азәр Рәһим оғлу
16. Аббасов Мәһәррәм Аббас оғлу
17. Мирзәјев Ризван Билал оғлу
18. Ибадов Ширзад Чаваншир оғлу
19. Нифталијев Адил Камал оғлу
20. Гурбанов Нофәл Нәриман оғлу
21. Фәтуллајев Аббас Ағаһүсејн оғлу
22. Чамалов Елман Һүсејн оғлу
23. Гијасов Илгар Әскәр оғлу
24. Мустафајев Сабир Рамиз оғлу
25. Абдуллајев Азад Јасәр оғлу
26. Һүсејнов Рамиз Аллаһверди оғлу
27. Рүстәмов Араз Бала оғлу
28. Әлијев Мәһди Рәшид оғлу
29. Ағајев Јусиф Баласәр оғлу
30. Солтанов Казым Һачы оғлу
31. Чәфәров Чәфәр Рүстәм оғлу
32. Һәсәнгулијев Ширвидил Чавад оғлу.
33. Һачыбабајев Тофиг Ариф оғлу
34. Әлијев Һидајәт Мәчид оғлу
35. Әһмәдов Имангулу Солтан оғлу
36. Һәсәнов Сәдрәддин Гардашхан оғлу
37. Абдуллајев Рамин Һәбиб оғлу
38. Бајрамов Орхан Рауф оғлу
39. Абдуллајев Нурәли Һачыбаба оғлу
40. Гасымов Сәрхан Лятиф оғлу
41. Гәдимәлијев Низәми Күлмәммәд оғлу
42. Чавадов Аббас Шәмси оғлу
43. Ағајев Рафиг Гәзәнфәр оғлу
44. Микајылов Баба Балакиши оғлу
45. Пиријев Еһтирам Бајрам оғлу
46. Кәримов Елхан Сумбај оғлу
47. Исмајылов Елхан Назим оғлу
48. Сәфәров Рәвшән Гијас оғлу
49. Нәсибов Ариф Әмираслан оғлу
50 Чамалов Елман Һүсејн оғлу
51. Әлизадә Фаиг Әбдүлһүсејн оғлу
52. Зүлалов Исфәндијар Адил оғлу
53. Рәсулов Атәш Һачы оғлу
54. Гасымов Вејсәл Һәбиб оғлу
55. Әлијев Ағабаба Мирзәбаба оғлу
56. Мәммәдов Мүшфиг Јусиф оғлу
57. Мусајев Вагиф Дурсун оғлу
58. Зејналов Сабиһ Әлиһејдәр оғлу
59. Мәммәдов Елмар Ингилаб оғлу
60. Һәсәнов Сәрхан Алтај оғлу
61. Дремочин Владимир Василјевич
62. Худијев Чингиз Елмар оғлу
63. Һәсәнов Олег Хасај оғлу
64. Мәммәдов Маһир Ариф оғлу
65. Гәдиров Талеһ Әләкбәр оғлу
66. Әличанов Бахыш Мәһәммәд оғлу
67. Искәндәров Әлијар Һүсејн оғлу
68. Гулијев Мәһәббәт Фәррух оғлу
69. Бүнјадзадә Әрәстун Мәһди оғлу
70. Маһмудов Азәр Әли оғлу
71. Әмиров Рәфаел Мәнсур оғлу
72. Чәфәров Заур Фирудин оғлу

«ДАШАЛТЫ» ФАЧИӘСИНИН ГУРБАНЛАРЫ

Նկար 2